

11/03/2008
համար 69Ն

**«ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՆԵՐԳՐՈՂՆԵՐ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԱՆՉԱՆՑ՝
ՈՐՊԵՍ ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՆԵՐԳՐՈՂՆԵՐ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
4/06-ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 23-րդ կետը, «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Վ Է .

1. Հաստատել «Որակավորված ներդրողներ համարելու չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման կարգը» Կանոնակարգ 4/06-ը՝ համաձայն Հավելվածի՝ (այսուհետ՝ Կանոնակարգ 4/06):
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 5-ի «Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագիրքը» հաստատելու մասին» թիվ 713 Ն որոշմամբ հաստատված 1-ին գլխի 1.1.8 ենթակետը, 2-րդ գլուխը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

Տիգրան Սարգսյան

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 69 Ն որոշման

«ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻՆ ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԱՆՁԱՆՑ՝ ՈՐՊԵՍ ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՂՆԵՐ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ»

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 4/06

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոնակարգը սահմանում է «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 23-րդ կետի «դ» ենթակետով սահմանված անձանց որակավորված ներդրողներ համարելու չափանիշները, ինչպես նաև որակավորված ներդրողների գրանցման կարգը:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2. Սույն կանոնակարգում օգտագործվում են հետևյալ հասկացությունները.

- 1) «**Օրենք**»՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք.
- 2) «**գուտ եկամուտը**»՝ ֆիզիկական անձի համախառն եկամուտն է՝ նվազեցրած հարկերը.
- 3) «**Տեղեկատվական բազա**»՝ Կենտրոնական բանկում գրանցված որակավորված ներդրողների վերաբերյալ տեղեկությունները ներառող ցուցակ:
- 4) «**Որակավորված ներդրող**»՝ Օրենքի 3-րդ հոդվածի 23-րդ կետի «ա-գ» և «ե» ենթակետերում նշված անձինք, ինչպես նաև այն անձը, որը որակավորված ներդրող կհամարվի սույն կանոնակարգի ԳԼՈՒԽ 6-ի համաձայն:
- 5) Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն Օրենքում կիրառվող նշանակությունը:

ԳԼՈՒԽ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3. Անձը համարվում է Օրենքի 3-րդ հոդվածի 23-րդ կետի «դ» և «ե» ենթակետերով սահմանված որակավորված անձ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկում (այսուհետ՝ կենտրոնական բանկ) գրանցված որակավորված ներդրողների Տեղեկատվական բազայում սույն կանոնակարգի համաձայն գրանցվելուց հետո:

4. Ֆիզիկական անձը որպես որակավորված ներդրող Տեղեկատվական բազայում

գրանցվելու համար պետք է համապատասխանի սույն կանոնակարգի ԳԼՈՒԽ 6-ով սահմանված չափանիշներին:

5. Ֆիզիկական անձը ինքնուրույն է գնահատում սույն կանոնակարգի ԳԼՈՒԽ 6-ով սահմանված չափանիշներին համապատասխանությունը: Յուրաքանչյուր իրավաբանական անձ ինքնուրույն է որոշում կայացնում Տեղեկատվական բազայում որպես որակավորված ներդրող գրանցվելու վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 4. ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՂ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑՈՒՄԻՑ ԴՈՒՐՄ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

6. Անձը որակավորված ներդրող համարվելու համար գրանցվում է Կենտրոնական բանկում՝ ներկայացնելով դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 1-ի (ֆիզիկական անձի համար) կամ հավելված 2-ի (իրավաբանական անձի համար):

7. Անձը Տեղեկատվական բազայից գրանցումից դուրս գալու համար կարող է դիմել Կենտրոնական բանկ՝ ներկայացնելով դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 3-ի:

8. Ֆիզիկական անձի դեպքում դիմումը պետք է ստորագրվի տվյալ անձի կամ նրա լիազոր անձի կողմից:

9. Իրավաբանական անձի դեպքում դիմումը պետք է ստորագրվի գործադիր տնօրենի կամ լիազորված այլ անձի կողմից:

10. Սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում թղթային կամ էլեկտրոնային տարբերակով:

ԳԼՈՒԽ 5. ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՂ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԿԱՄ ԳՐԱՆՑՈՒՄԻՑ ՀԱՆՑԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ

11. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերում սահմանված փաստաթղթերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գրանցում է անձին Տեղեկատվական բազայում կամ չի գրանցում կամ հանում է անձին գրանցումից:

12. Կենտրոնական բանկը չի գրանցում անձին որպես որակավորված ներդրող, եթե սույն կանոնակարգի հավելված 1-ով կամ հավելված 2-ով նախատեսված դիմումը թերի է լրացված:

13. Սույն կանոնակարգի 11-րդ կետում նշված ժամկետում դիմող անձի՝ որպես որակավորված ներդրող գրանցման կամ գրանցման մերժման որոշում չկայացնելու դեպքում անձը համարվում է գրանցված որպես որակավորված ներդրող:

14. Սույն կանոնակարգի 11-րդ կետում նշված ժամկետում դիմող անձին Տեղեկատվական բազայից գրանցումից հանելու մասին որոշում չկայացնելու դեպքում անձը համարվում է Ռեգիստրում գրանցումից հանված:

15. Դիմող անձը կարող է տեղեկանալ որպես որակավորված ներդրող գրանցվելու կամ գրանցումից դուրս գալու վերաբերյալ Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվող Տեղեկատվական բազայից՝ տվյալ անձի կողմից համապատասխան դիմումի ներկայացմանը հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում:

16. Որպես որակավորված ներդրող գրանցման որոշումն ուժի մեջ է մինչև դիմումը

ներկայացմանը հաջորդող տարվա հունիսի 30-ը:

ԳԼՈՒԽ 6. ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՂ ՀԱՍԱՐԵԼՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

17. Որակավորված ներդրող են համարվում այն ֆիզիկական անձինք, որոնք գրանցվել են Տեղեկատվական բազայում որպես այդպիսին համաձայն սույն կանոնակարգի և բավարարում են հետևյալ չափանիշներից առնվազն երկուսին.

- 1) անձը դիմումի ներկայացմանը նախորդող 4 եռամսյակների ընթացքում արժեթղթերի շուկայում իրականացրել է 10 և ավելի գործարք միջին եռամսյակային կտրվածքով, ընդ որում` մեկ գործարքի ծավալը միջին հաշվով կազմում է առնվազն 500 000 Հայաստանի Հանրապետության դրամ,
- 2) ֆիզիկական անձի արժեթղթերի փաթեթի մեծությունը դիմումի ներկայացման պահին գերազանցում է 100 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը կամ ֆիզիկական անձի գուտ եկամուտը դիմումի ներկայացմանը նախորդող հաշվետու տարվա ընթացքում գերազանցում է 100 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը,
- 3) ֆիզիկական անձը ֆինանսական ոլորտում ունի առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, որը պահանջում է արժեթղթերում ներդրումների հետ կապված գիտելիքներ:

18. Որակավորված ներդրող են համարվում այն իրավաբանական անձինք, որոնք գրանցվել են որպես որակավորված ներդրող համաձայն սույն կանոնակարգի:

ԳԼՈՒԽ 7. ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱՆ

19. Կենտրոնական բանկը վարում է Կենտրոնական բանկում գրանցված որակավորված ներդրողների Տեղեկատվական բազան: Տեղեկատվական բազան ենթակա է հրապարակման Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայքում:

20. Տեղեկատվական բազայում ֆիզիկական անձանց համար պահվելու է հետևյալ տեղեկատվությունը. անուն, ազգանուն, բնակության վայրը, հեռախոսը, նույնականացնող համարը, էլեկտրոնային հասցեն:

21. Տեղեկատվական բազայում իրավաբանական անձանց համար պահվելու է հետևյալ տեղեկատվությունը. ընկերության անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսը, նույնականացվող համարը, էլեկտրոնային հասցեն:

22. Տեղեկատվական բազայում գրանցված անձի վերաբերյալ տեղեկությունները փոփոխվելու դեպքում անձը կարող է դիմել Կենտրոնական բանկ` խնդրելով կատարել համապատասխան փոփոխություններ:

23. Կենտրոնական բանկը գրանցված որակավորված ներդրողների վերաբերյալ տեղեկությունների փոփոխությունները ներառում է Տեղեկատվական բազայում դիմումը ստանալու օրվանից 2 աշխատանքային օրվա ընթացքում :

24. Կենտրոնական բանկը պատասխանատու է միայն Տեղեկատվական բազայում որակավորված ներդրողներին պատշաճ գրանցելու համար: Կենտրոնական բանկը պատասխանատու չէ որակավորված ներդրողների` սույն կանոնակարգի ԳԼՈՒԽ 6-ով սահմանված չափանիշներին համապատասխանության արժանահավատության ստուգման համար:

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
քիվ 69 Ն որոշմամբ հաստատված
«Որակավորված ներդրողներ համարելու չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման կարգը» կանոնակարգ 4/06-
ը հավելվածի

«Որակավորված ներդրողներ համարելու չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման կարգը» կանոնակարգ 4/06-ը հավելվածի

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՂ ԳՐԱՆՑՎԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

ՄԱՍ Ա

Կենտրոնական բանկի նախագահին

Հարգելի -----

Ես՝ -----, հավաստիացնում եմ, որ բավարարում եմ ստորև

(որակավորված անձի ֆիզիկական անձի անունը, ազգանունը)

նշված չափանիշներից առնվազն երկուսին (բավարարող չափանիշների առջև դրված ազատ վանդակներում կատարվում է նշում).

դիմումի ներկայացմանը նախորդող 4 եռամսյակների ընթացքում արժեթղթերի շուկայում իրականացրել եմ 10 և ավելի գործարք միջին եռամսյակային կտրվածքով, ընդ որում՝ մեկ գործարքի ծավալը միջին հաշվով կազմում է առնվազն 500 000 Հայաստանի Հանրապետության դրամ

իմ արժեթղթերի փաթեթի մեծությունը դիմումի ներկայացման պահին գերազանցում է 100 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը կամ ֆիզիկական անձի գուտ եկամուտը դիմումի ներկայացմանը նախորդող հաշվետու տարվա ընթացքում գերազանցում է 100 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը

ֆինանսական ոլորտում ունեմ առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, որը պահանջում է արժեթղթերում ներդրումների հետ կապված գիտելիքներ

Հավաստիացնում եմ, որ տեղյակ եմ որպես որակավորված ներդրող գրանցվելու հետևանքներին «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Մասնավորապես, ես տեղյակ եմ, որ «Կենտրոնական բանկում գրանցված որակավորված ներդրողների Տեղեկատվական բազայում» գրանցվելու դեպքում ինձ արժեթղթերի առաջարկ կատարելու դեպքում բացակայում է ազդագիր հրապարակելու թողարկողի պարտավորությունը: Հետևաբար, ազդագրից բխող իրավունքները չեն տարածվում ինձ վրա:

Խնդրում եմ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցել ինձ որպես որակավորված ներդրող:

Դիմումատուի (դիմումատուի լիազորված անձի) անուն , ազգանուն -----

Հավաստիացնում եմ, որ լիազորված եմ ----- ի անձի անունից

(որակավորված անձի իրավաբանական անձի անվանումը)

Կենտրոնական բանկ ներկայացնել նրան՝ որպես որակավորված ներդրող գրանցելու նպատակով սույն դիմումը (սույն տողը լրացվում է լիազոր անձի առկայության դեպքում):

Դիմումատուի (դիմումատուի լիազորված անձի) ստորագրություն (դիմումի՝ էլեկտրոնային տարբերակով ներկայացման դեպքում դիմումատուի (դիմումատուի լիազորված անձի) ստորագրությունը անհրաժեշտ չէ):

Ամսաթիվ -----

ՄԱՍ Բ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Կենտրոնական բանկը տեղադրելու է ՄԱՍ Բ-ում բերված տեղեկատվությունը Կենտրոնական բանկում գրանցված որակավորված ներդրողների Տեղեկատվական բազայում, որը ենթակա է հրապարակման Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայքում:

«Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն «Կենտրոնական բանկում գրանցված որակավորված ներդրողների Տեղեկատվական բազայում» գրանցվելու դեպքում Ձեզ արժեթղթերի առաջարկ կատարելու դեպքում թողարկողը պարտավոր չէ ազդագիր հրապարակել: Հետևաբար, ազդագրից բխող իրավունքները չեն տարածվում Ձեզ վրա:

Ձեզ սույն փաստաթղթում նշված հասցեով կուղակվի գրություն, որով կնշվի որ Դուք ընդգրկված եք «Կենտրոնական բանկում գրանցված որակավորված ներդրողների Տեղեկատվական բազայում»:

Որպես որակավորված ներդրող գրանցումը ուժի մեջ է մինչև դիմումը ներկայացմանը հաջորդող հունիսի 30-ը, եթե Դուք չեք դիմել ավելի վաղ ժամկետում ուժը կորցած ճանաչելու համար:

Տեղեկատվական բազայում Ձեր վերաբերյալ տեղեկությունները փոփոխվելու դեպքում Դուք կարող եք դիմել Կենտրոնական բանկ՝ խնդրելով կատարել համապատասխան փոփոխություններ:

Որակավորվող ֆիզիկական անձի
անունը, ազգանունը

Բնակության վայրը, ներառյալ
հեռախոսը (այստեղ կարող է գրվել
փոստային արկղը կամ ցանկացած
հասցեն, որի միջոցով կարելի է անձի
հետ կապ հաստատել՝ կապված
արժեթղթերի առաջարկի հետ):

Էլեկտրոնային հասցե (եթե առկա է)

Ամսաթիվ

ՀԱՎԵԼՎԱԾ 2.

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
քիվ 69 Ն որոշմամբ հաստատված
«Որակավորված ներդրողներ համարելու չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման կարգը» կանոնակարգ 4/06-
ը հավելվածի

«Որակավորված ներդրողներ համարելու չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման կարգը» կանոնակարգ 4/06-ը հավելվածի

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՂ ԳՐԱՆՑՎԵԼՈՒ ՀԱՍՏՐ
ԴԻՄՈՒՄ**

ՄԱՍ Ա

Կենտրոնական բանկի նախագահին

Հարգելի -----

(իրավաբանական անձի անվանումը)

որոշում է կայացրել որակավորված ներդրող գրանցվելու վերաբերյալ:

Հավաստիացնում ենք, որ տեղյակ ենք որպես որակավորված ներդրող գրանցվելու հետևանքներին «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Մասնավորապես, տեղյակ ենք, որ «Կենտրոնական բանկում գրանցված որակավորված ներդրողների Տեղեկատվական բազայում» գրանցվելու դեպքում մեզ արժեթղթերի առաջարկ կատարելու դեպքում բացակայում է ազդագիր հրապարակելու թողարկողի պարտավորությունը: Հետևաբար, ազդագրից բխող իրավունքները չեն տարածվում մեզ վրա:

Խնդրում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցել որպես որակավորված ներդրող:

Դիմումատուի (ղիմումատուի լիազորված անձի) անուն, ազգանուն -----

Հավաստիացնում են, որ լիազորված են ----- ի անձի անունից

(որակավորված անձի իրավաբանական անձի անվանումը)

Կենտրոնական բանկ ներկայացնել նրան՝ որպես որակավորված ներդրող գրանցելու նպատակով սույն դիմումը (սույն տողը լրացվում է լիազոր անձի առկայության դեպքում):

Դիմումատուի (ղիմումատուի լիազորված անձի) ստորագրություն (ղիմումի՝ էլեկտրոնային տարբերակով ներկայացման դեպքում դիմումատուի (ղիմումատուի լիազորված անձի) ստորագրությունը անհրաժեշտ չէ) -----

Ամսաթիվ -----

ՄԱՍ Բ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Կենտրոնական բանկը տեղադրելու է ՄԱՍ Բ-ում բերված տեղեկատվությունը «Կենտրոնական բանկում գրանցված որակավորված ներդրողների Տեղեկատվական բազայում, որը ենթակա է հրապարակման Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայքում»:

«Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն «Կենտրոնական բանկում գրանցված որակավորված ներդրողների Տեղեկատվական բազայում» գրանցվելու դեպքում Ձեզ արժեթղթերի առաջարկ կատարելու դեպքում թողարկողը պարտավոր չէ ազդագիր հրապարակել: Հետևաբար, ազդագրից բխող իրավունքները չեն տարածվում Ձեզ վրա:

Ձեզ սույն փաստաթղթում նշված հասցեով կողակվի գրություն, որով կնշվի որ Դ-ուք ընդգրկված եք «Կենտրոնական բանկում գրանցված որակավորված ներդրողների Տեղեկատվական բազայում»:

Որպես որակավորված ներդրող գրանցումը ուժի մեջ է մինչև դիմումը ներկայացմանը հաջորդող հունիսի 30-ը, եթե դուք չեք դիմել ավելի վաղ ժամկետում գրանցումը ուժը կորցած ճանաչելու համար:

Տեղեկատվական բազայում Ձեր վերաբերյալ տեղեկությունները փոփոխվելու դեպքում դուք կարող եք դիմել Կենտրոնական բանկ՝ խնդրելով կատարել համապատասխան փոփոխություններ:

Որակավորվող իրավաբանական
անձի անվանումը

Գ-տնվելու վայրը, ներառյալ՝
հեռախոսը (այստեղ կարող է գրվել
փոստային արկղը կամ ցանկացած
հասցե, որի միջոցով կարելի է անձի
հետ կապ հաստատել՝ կապված
արժեթղթերի առաջարկի հետ)

Էլեկտրոնային հասցե (եթե առկա է)

Ամսաթիվ

«Որակավորված ներդրողներ համարելու չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման կարգը» կանոնակարգ 4/06-ը հավելվածի

ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱՅՈՒՄ ԳՐԱՆՑՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ

ԴԻՄՈՒՄ

Կենտրոնական բանկի նախագահին

Հարգելի -----

Խնդրում եմ/ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հանել

(*Ֆիզիկական անձի անունը, իրավաբանական անձի անվանումը, Տեղեկատվական բազայում գրանցման համարը*)

Կենտրոնական բանկում գրանցված որակավորված ներդրողների Տեղեկատվական բազայից:

Իրավաբանական անձ որակավորված ներդրողի համար

Անվանումը

Գտնվելու վայրը (կարող է գրվել փոստային արկղը կամ ցանկացած հասցե, որի միջոցով կարելի է անձի հետ կապ հաստատել)

Էլեկտրոնային հասցե (եթե առկա է)

Դիմումի ամսաթիվ

Դիմումատուի (ղիմումատուի լիազորված անձի) անուն , ազգանուն -----

Հավաստիացնում եմ, որ լիազորված եմ ----- ի անձի անունից

(*որակավորված անձի իրավաբանական անձի անվանումը*)

Կենտրոնական բանկ ներկայացնել նրան՝ որակավորված ներդրողների Տեղեկատվական բազայում գրանցումից հանելու նպատակով սույն դիմումը (սույն տողը լրացվում է լիազոր անձի առկայության դեպքում)

Դիմումատուի (ղիմումատուի լիազորված անձի) ստորագրություն (ղիմումի՝ էլեկտրոնային տարբերակով ներկայացման դեպքում դիմումատուի (ղիմումատուի լիազորված անձի) ստորագրությունը անհրաժեշտ չէ:)

Ամսաթիվ -----